ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«10» 10 2025թ. N3040-Լ

ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 1599-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունիսի 10-ի «Գիտական կազմակերպությանը (կենտրոնին) ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացակարգը և հանձնաժողովի կազմը հաստատելու մասին» N 1599-Լ հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանի N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հրամանի N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հունիսի 10-ի

N 3040 -Լ հրամանի

«Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հունիսի 10-ի

N 1599 -Լ հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ)

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության անասնաբուժության բաժնի պետ կամ գլխավոր անասնաբույժ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության բուսասանիտարիայի բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ

ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անասնաբուժության և համարակալման բաժնի պետ կամ բուսասանիտարիայի և ագրոքիմիական հետազոտությունների բաժնի պետ

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության վարչության պետ կամ բուսասանիտարիայի վարչության պետ կամ անասնաբուժության վարչության պետ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող (համաձայնությամբ)»:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հոկտեմբերի 10-ի

N 3040 -L հրամանի

«Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
էկոնոմիկայի նախարարի

2025 թվականի հունիսի 10-ի

N 1599 -L հրամանի

ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ (ԿԵՆՏՐՈՆԻՆ) ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ ԵՎ ԿԻՑ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ընթացակարգով կանոնակարգվում են գիտական կազմակերպությանը (կենտրոնին) (այսուհետ՝ գիտական կազմակերպություն) սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատում իրականացնելու լիազորման մասին հայտի (այսուհետ՝

հայտ) և կից փաստաթղթերի ուսումնասիրության ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորություններ տալու վերաբերյալ ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

2. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

3. Հանձնաժողովը կազմված է յոթ անդամից՝ հանձնաժողովի նախագահից և անդամներից:
4. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ լիազոր մարմին) Սննդամթերքի անվտանգության վարչության պետ, Սննդամթերքի անվտանգության վարչության անասնաբուժության բաժնի պետ կամ գլխավոր անասնաբույժ, Սննդամթերքի անվտանգության վարչության սննդամթերքի անվտանգության բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ, Սննդամթերքի անվտանգության վարչության բուսասանիտարիայի բաժնի պետ կամ գլխավոր մասնագետ, ՀՀ էկոնոմիկայի նախարարության «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անասնաբուժության և համարակալման բաժնի պետ կամ բուսասանիտարիայի և ագրոքիմիական հետազոտությունների բաժնի պետ, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի սննդամթերքի անվտանգության վարչության պետ կամ բուսասանիտարիայի վարչության պետ կամ անասնաբուժության վարչության պետ, Հայաստանի ազգային ագրարային համալսարանի գիտական աստիճան ունեցող գիտական աշխատող (համաձայնությամբ):

5. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա են հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Քվորում չլինելու դեպքում՝ նիստը համարվում է չկայացած և նշանակվում է նոր նիստ:
6. Հանձնաժողովի նիստերը հրավիրում և վարում է հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի անդամներից որևէ մեկը՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:
7. Հանձնաժողովի նիստերի հրավիրման վայրի, օրվա և ժամի մասին հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամներին պաշտոնական էլ. փոստով ծանուցում է նիստից առնվազն երեք աշխատանքային օր առաջ:
8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) համաձայն՝ սննդամթերքի անվտանգության, անասնաբուժության և բուսասանիտարիայի ոլորտներում ռիսկի գնահատումն իրականացնելու լիազորություն ստանալու համար լիազոր մարմինը հայտարարում է մրցույթ: Հայտը և որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով սահմանված չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը ներկայացվում են տաս աշխատանքային օրվա ընթացքում:
9. Լիազոր մարմնի կողմից հայտարարությունը տալու հաջորդ աշխատանքային օրը, լիազոր մարմնի ղեկավարի հրամանով ստեղծվում է հանձնաժողովի անհատական կազմը:
10. Սույն հրամանի 8-րդ կետով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի նախագահը ներկայացված հայտի և կից փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով հրավիրում է հանձնաժողովի նիստ:
11. Հայտը ներկայացնելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտում և կից փաստաթղթերում տեխնիկական բնույթի սխալներ, ջնջումներ, վրիպակներ հայտնաբերելու կամ ներկայացված փաստաթղթերը թերի լինելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հանձնաժողովի

անդամը (ում էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով մակագրված է լիազորման հայտը և կից փաստաթղթերը) թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է դրա մասին հայտատուին՝ հնարավորություն տալով եռօրյա ժամկետում շտկել թերությունները:

12. Հայտը ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում տեխնիկական բնույթի թերությունները շտկելու նախաձեռնությամբ կարող է հանդես գալ նաև հայտատուն:
13. Ակնհայտ կեղծ փաստաթղթեր ներկայացնելու, որոշմամբ սահմանված բոլոր փաստաթղթերը չներկայացնելու և սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում՝ հանձնաժողովի նախագահը հրավիրում է հանձնաժողովի նիստ և կազմվում է հայտը մերժելու վերաբերյալ եզրակացություն և երկու աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի նախագահը տեղեկացնում է հայտատուին:
14. Հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ուսումնասիրությունը իրականացվում է տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում:
15. Եթե հայտարարված մրցույթին դիմել է մեկ կազմակերպություն և հանձնաժողովի կողմից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 8-րդ կետով սահմանված բոլոր չափանիշներին, ապա հանձնաժողովը կազմում է եզրակացություն՝ համապատասխանության վերաբերյալ, իսկ մեկից ավելի կազմակերպությունների դեպքում՝ նախապատվությունը տրվում է տվյալ ոլորտում գործունեության իրականացման առավել երկարամյա փորձ ունեցող կազմակերպությանը, իսկ այդ պայմանի հավասարության դեպքում, որոշվում է հանձնաժողովի անդամների քվեարկությամբ: Նախապատվությունը տրվում

է քվեարկության դրված այն գիտական կազմակերպությանը, ում հանձնաժողովի անդամների կեսից ավելին կողմ է քվեարկել:

16. Սույն հրամանի 14-րդ կետում սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մեկ աշխատանքային օր հետո, հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի այն անդամին (ում էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով մակագրված է լիազորման հայտը և կից փաստաթղթերը) հանձնարարում է նախապատրաստել գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորման վերաբերյալ հրամանի նախագիծը: Հրամանի նախագիծը, համապատասխանության վերաբերյալ եզրակացության և Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշմամբ հաստատված N 2 ձևի վկայականի հետ միասին էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով (իսկ դրա անհնարինության դեպքում՝ թղթային եղանակով) ներկայացվում է լիազոր մարմնի ղեկավարին:

17. Լիազոր մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը, երեք աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է ներկայացված հրամանի նախագիծը և վկայականը:

18. Գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորման մասին հրամանը, համապատասխանության վերաբերյալ եզրակացությունը և վկայականը հանձնաժողովի նախագահը երեք աշխատանքային օրվա ընթացքում թղթային եղանակով տրամադրում է հայտատուին:

19. Որոշմամբ սահմանված չափանիշներին չհամապատասխանելու դեպքում՝ հանձնաժողովը կազմում է սահմանված չափանիշներին չհամապատասխանելու մասին անհամապատասխանության վերաբերյալ եզրակացություն:

20. Սույն հրամանի 14-րդ կետում սահմանված ժամկետի ավարտից հետո՝ հաջորդ աշխատանքային օրը, հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի այն

անդամին (ում էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով մակագրված է լիազորման հայտը և կից փաստաթղթերը) հանձնարարում է նախապատրաստել գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորման վերաբերյալ հայտը մերժելու մասին հրամանի նախագիծ: Հրամանի նախագիծը և անհամապատասխանության վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է լիազոր մարմնի ղեկավարին:

21. Լիազոր մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով անհամապատասխանության վերաբերյալ եզրակացությունը, երկու աշխատանքային օրվա ընթացքում հաստատում է ներկայացված հրամանի նախագիծը:
22. Գիտական կազմակերպությանը ռիսկի գնահատում իրականացնելու լիազորման վերաբերյալ հայտը մերժելու մասին հրամանը և անհամապատասխանության վերաբերյալ եզրակացությունը հանձնաժողովի նախագահը երեք աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով տրամադրում է հայտատուին:
23. Լիազոր մարմինը պարտավոր է երաշխավորել Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 8-ի N 563-Ն որոշման համաձայն լիազոր մարմին ներկայացված հայտատուների փաստաթղթերի գաղտնիությունը, առևտրային գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանությունը:
24. Սույն հրամանով սահմանված ընթացակարգի ավարտից հետո հանձնաժողովը դադարեցնում է իր գործունեությունը:
25. Հայտատուն սույն հրամանով սահմանված մերժման վերաբերյալ եզրակացությունը կարող է բողոքարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»: